ԻՆԵԿՈԲԱՆԿ

12/06/26 № G 6865

**ԵՐԱՇԽԻՔ N EA26/00655**

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/100 (Չափաբաժին 4, չափաբաժին 10, չափաբաժին 15, չափաբաժին 21, չափաբաժին 28, չափաբաժին 33, չափաբաժին 37, չափաբաժին 47, չափաբաժին 52) ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **«ՎԱՐԴԱՆՅԱՆ» ՍՊԸ-ի** (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

**2.** Երաշխիքով «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 17,000,000.00 (տասնյոթ միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000466 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բանկի կողմից Երաշխիքի ելքագրման ամսաթվից, որը նշված է սույն Երաշխիքում և գործում է բենեֆիցիարի կողմից ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/100 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մեկ հարյուր քսան աշխատանքային օր, բայց ոչ ավել, քան 25/12/2026թ. ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի **liana.kharatyan@escs.am** էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Լիազորված անձ**
**«Արմավիր» մ/ճ ՓՄՁ բիզնեսի բաժնի ղեկավար** **Ռոբերտ Մկրտչյան**

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ «ԱՐՄԱՎԻՐ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ CJSC "INECOBANK" "ARMAVIR" BRANCH REPUBLIC OF ARMENIA ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * 02518512 *

Կատարող՝ Անի Աթոյան
Ստորաբաժանում՝ ՎՀԿ
Հեռ.՝ +374 10 510510 (5477